ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ԵՔ- ԳՀԱՊՁԲ-18/198» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

- *Վայրը՝* *Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 224/2 սենյակ*
- *Օրը՝* *06.06.2018թ.*
- *Ժամը՝* *10:00*

Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ իրենց որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1. Ընդունել ի գիտություն, որ 01.06.2018 թվականին ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի նախատեսված տվյալների ճշտման մասին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում է կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

06.06.2018 թվականին ստացվել է պատասխան՝ ըստ որի բոլոր մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող, բացառությամբ.

- «ՀԱՍՄ» ՍՊԸ - հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ 438,808.0 (չորս հարյուր երեսունութ հազար ութ հարյուր ութ) ՀՀ դրամի չափով:

Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀԱՍՄ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար, մերժել և մասնակցի կամ կոմիտեի կողմից նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը ներառյալ լրացուցիչ տեղեկատվություն չներկայացնելու դեպքում կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով սահմանված ընթացակարգը:

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

2. Մասնակիցների կողմից որակավորման պահանջների անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնահատման արդյունքները.

ՀՀ	Մասնակիցների անվանումը	տվյալները
1	Բարսեղյան եղբայրներ ՍՊԸ	բավարար
2	Մեդտեխսերվիս ՍՊԸ	բավարար
3	ՀԱՍՄ ՍՊԸ	անբավարար
4	Ֆոտոն ՍՊԸ	բավարար
5	Օլանդա ՍՊԸ	բավարար
6	Սեմանգ ՍՊԸ	բավարար
7	ԱՁ Էդգար Հովհաննիսյան	բավարար

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

3. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց վերը նշված չափաբաժնի մասով մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա սույն թվականի հունիսի 11-ին ժամը 11:00-ին Երևանի քաղաքապետարանում (ՀՀ, ք.Երևան, Արգիշտիի 1, 224/2 սենյակ)՝ բանակցությունների վերջնաժամկետ սահմանելով 15 րոպե:

Ընդունվել է որոշում՝ *կողմ-5* *դեմ-0*

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ *Ն.Սարգսյան* _____

Հանձնաժողովի անդամներ՝ *Ժ.Ղարդաշյան* _____

Ա.Գաբրիելյան _____

Լ.Մարտիրոսյան _____

Փ.Շահմուրադյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ *Ա. Վարդանյան* _____